

17.04.26 - 18.04.26

11:00

Անցանց

Գրանցումը փակ է



[Պահպանել Google օրացույցում](#)

Հայաստան, Ադվերան, Դիլիջան

Ս.թ. ապրիլի 17-18-ը Ադվերանում և Դիլիջանում տեղի կունենա «ՀՀ սնկերի բազմազանությունը»՝ COP 17-ին ընդառաջ» խորագրով աշխատաժողով, որը կազմակերպվում է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի կողմից իրականացվող «APPEAR Project 373» ծրագրի շրջանակում:

Աշխատաժողովը նպատակ ունի համախմբելու պետական կառույցների, հասարակական կազմակերպությունների, գիտական և կրթական հաստատությունների ներկայացուցիչներին՝ քննարկելու սնկերի կենսաբազմազանության ուսումնասիրության, ԴՆԹ բարկոդավորման կիրառության, ինչպես նաև բնության պահպանության և կայուն զարգացման ոլորտներում համագործակցության հնարավորությունները:

Միջոցառման ընթացքում կներկայացվեն ծրագրի նպատակները, աշխատանքների ընթացքը և ակնկալվող արդյունքները, ինչպես նաև կկազմակերպվի մասնագիտական քննարկում շահագրգիռ կողմերի (Stakeholder Workshop) մասնակցությամբ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

(+37460) 710000

info@ysu.am